

Հ Ո Ղ Վ Ա Շ Ն Ե Ր

ՍՄԿԿ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԲՅՈՒՋԱԼԻ ՄԵԼՎԻՆԱԶՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից մշակված «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում» խնդիր է դրվում «հասնել այն բանին, որ տնտեսական մեխանիզմը աշխատավորական կոլեկտիվներին առավելագույն չափով կողմնորոշի դեպի արտագրության աճի տեմպերի արագացում և արդյունավետության բարձրացում...»¹ Դրա կենսագործման բնագավառում սոցիալիստական արտադրության տնտեսական արդյունավետության տեսության հիմնական խնդիրը արդյունավետության բարձրացման տնտեսական լծակների, շարժառիթների, խթանների հայտնաբերումը, այդ բարդ պրոցեսի պլանային կառավարման եղանակների ու մեթոդների կատարելագործումը, արդյունավետության բարձրացման հայտնաբերված ռեզերվների ամբողջովին օգտագործման մեխանիզմի մշակումը և դրա իրացման ուղիների նախանշումն է։ Ձեռնարկությունների, արտադրական միավորումների, ճյուղերի, ամբողջությամբ վերցրած ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքը հետևողականորեն այդ պրոբլեմի լուծմանն ուղղվելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել «արտադրության արդյունավետության» էությունը և դրան համապատասխան ընտրել չափանիշ և ցուցանիշներ։

Հայտնի է, որ արտադրությունը, որպես մարդկանց բնության հետ փոխազդեցության պրոցես, իրականացվում է նրանց միջև որոշակի արտադրահարաբերությունների պայմաններում։ Հետևապես, հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է այն դիտարկել սոցիալ-տնտեսական որոշակի կացութաձևին բնորոշ արտադրահարաբերությունների պայմաններում։ Դա նշանակում է, որ հասարակական արտադրության արդյունավետության էությունն առավելագույն չափով է համապատասխանելու տվյալ սոցիալ-տնտեսական կացութաձևի հիմնական տնտեսական օրենքին։ Այս տեսանկյունից կարելի է ամբողջությամբ համաձայնել ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ա. Նոտկինի հետ, որ «սոցիալիզմի օրոք հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության կատեգորիան արտահայտում է հարաբերություններ ամբողջությամբ հասարակության և առանձին ճյուղերի ու արտադրական կոլեկտիվների միջև, այդ կոլեկտիվների ու դրանց ներսում, հարաբերություններ, որոնք ուղղված են հանուն ժողովրդի բարեկեցության անշեղ վերելքի շահերի ծախսումների ու օգտագործված ռեսուրսների համեմատ արտադրության էֆեկտի մաքսիմալացմանը»²։ Նա արտադրության էֆեկտը դիտարկում է որպես ամբողջությամբ սոցիալիստական հասարակության շահերի դրսևորում, որը ենթադրում է դրանց համապատասխան լինելը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին, ինչպես նաև հասարակական ու անձնական պահանջմունքներին նոր ստեղծված արդյունքի (հասարակական ամբողջական արդյունքի և ազգային եկամտի) կառուցվածքի համապատասխանությունը։ Հետևապես, հասարակական արտադրության արդյունավետությունը բնութագրում է նաև տվյալ հասարակական կա-

¹ «Սովետական Հայաստան», 9. III. 1986:

² «Экономическая эффективность общественного производства в период развитого социализма», М., 1977, с. 6.

ցութաձևի, նրան ներհատուկ արտադրահարաբերություններով պայմանավորված սոցիալ-տնտեսական ամբողջ համակարգի արդյունավետությունը:

Սոցիալիստական արտադրության արդյունավետության վերծանման համար մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի Ֆ. Էնգելսի ցուցումը կոմունիզմի օրոք պլանավորման մասին: «Հասարակությունը պիտի իմանա,— գրում է նա,— թե սպառման յուրաքանչյուր առարկայի արտադրության համար որքան աշխատանք է պահանջվում: Իր արտադրական պլանը նա պիտի համապատասխանեցնի արտադրամիջոցներին... Այդ պլանը վերջնականապես որոշվում է սպառման զանազան առարկաների օգտակար գործողությունների հաշվարկներով և փոխադարձաբար զուգորդելով ինչպես և աշխատանքի այն քանակների հետ զուգորդելով, որոնք անհրաժեշտ են այդ առարկաների արտադրելու համար»⁵: Սոցիալիստական հասարակարգում, ըստ Ֆ. Էնգելսի, առանձնահատուկ ուշադրության է արժանանալու ստեղծվող նյութական բարիքների օգտակարությունը, դրանց սպառողական արժեքը, որոնք և հասարակության անդամների բարեկեցության բարձրացման նախապայմաններն են (հանրահայտ է, որ կապիտալիստական հասարակարգում կապիտալիստին նախ և առաջ հետաքրքրում է հավելյալ արժեքի ստացումը, իսկ սպառողական արժեքի ստեղծումը սեսկ այն առումով, որ առանց դրա հնարավոր չէ յուրացնել հավելյալ արժեքը): Հետևապես, սոցիալիզմի օրոք արտադրության արդյունավետության բարձրացումը, այսինքն հասարակական աշխատանքի հնարավոր նվազագույն ծախսումներով վերջնական արդյունքի՝ սպառողական արժեքների առավելագույն զանգվածի ստեղծումը հանդես է գալիս որպես համընդհանուր գործնական սկզբունք, ամբողջ հասարակության ընդհանրական շահերն արտացոլող կատեգորիա և աղեկվատ է նրա էությունը: Սոցիալիստական հասարակարգում արդյունավետությունը, նպատակաուղղված լինելով առավել լրիվ բավարարելու բնակչության հարաճուն պահանջարկը, արտացոլում է աշխատավորների ամբողջ զանգվածի համընդհանուր շահերը, հանդես է գալիս որպես այդ ընդհանուր նպատակին հասնելու անհրաժեշտ պայմաններից մեկը: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ հասարակական արտադրության արդյունավետությունը սոցիալիզմի օրոք անկախ է, չի համապատասխանում կամ «հակադրվում է» առանձին աշխատողների, աշխատավորական կոլեկտիվների կամ ամբողջությամբ ճյուղերի շահերին, գրանցում արտադրության արդյունավետության բարձրացմանը: Սոցիալիզմի օրոք արդյունավետության բարձրացման ուղղությամբ համընդհանուր շահագրգռվածությունը թելադրում է արդյունավետությունը դիտարկել որպես մեկ միասնական, ամբողջական համակարգի գործունեության արդյունք: Այսպիսի մոտեցումը ստիպում է արդյունավետությունը դիտարկելիս շահմանափակվել արտադրության այս կամ այն ոլորտով կամ արտադրության կազմակերպման հիերարխիկ այս կամ այն մակարդակով: Արտադրության արդյունավետությունը պետք է գնահատվի ինչպես ուղղահայաց (ժողովրդական տնտեսություն—ճյուղ—ձեռնարկություն—արտադրամաս), այնպես էլ հորիզոնական (արտադրություն, բաշխում, շրջակա միջավայրի պահպանում և այլն) կտրվածքով: Սոցիալիստական հասարակարգում արդյունավետությունը լինելով ամբողջությամբ տնտեսավարման համակարգի, այլ ոչ թե միայն նրա առանձին տարրերի բնութագրերից մեկը, դառնում է հասարակական վերարտադրության կատեգորիա: Այստեղից էլ հենց մասնագիտական գրականության մեջ հաճախակի հանդիպող «հասարակական վերարտադրության արդյունավետություն» հասկացությունը: Եթե խոսքը վերաբերում է հասարակական արտադրությանը (երբ դրանում ներառվում է նոր ստեղծված արդյունքի շարժը վերարտադրության բոլոր՝ արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման փուլերում), ապա այն իր շարժի (դինամիկայի) և անընդհատության մեջ վերարտադրություն է (պարզ կամ ընդլայնված) ու ամենե-

⁵ Ֆ. Էնգելս, Անտի-Պյուրիզմ, Երևան, 1967, էջ 417:

վին կարիք չկա հասարակական արտադրության արդյունավետությունը և հասարակական վերարտադրության արդյունավետությունը հակադրել միմյանց: Հայտնի է, որ արտադրության եղանակի վերարտադրությունը պրոցես է, որի ընթացքում իրականացվում է արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների վերարտադրություն: Հասարակական արտադրության ամբողջական համակարգը, ինչպես հայտնի է, ստորաբաժանվում է չորս կապակցված փուլի՝ անմիջական արտադրություն, բաշխում, փոխանակում, սպառում: Արտադրության արդյունավետությունն այդ փուլերից մեկում՝ անմիջական արտադրության փուլում, հասարակական վերարտադրության առավել լայն և ընդհանրական հասկացության մի պահը, մասն է, դրա դրսևորման ձևը: Ծթե միաժամանակ նկատի ունենանք, որ վերարտադրությունն անընդհատ կրկնվող արտադրության պրոցես է (պարզ կամ ընդլայնված տեսքով), ապա ճիշտ են այն տրեստեսագետները, որոնք գտնում են, որ արդյունավետության տեսանկյունից «վերարտադրության բոլոր կողմերի ու պահերի էությունը բնութագրող կատեգորիան»⁴ առավել նպատակահարմար է անվանել «սոցիալիստական ընդլայնված վերարտադրության» կամ կրճատ «վերարտադրության արդյունավետություն»:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տեսակետներ, երբ հասարակական արտադրության արդյունավետությունը նույնացվում է առավելագույն էֆեկտի ստացման հետ (հաշվի չառնելով էֆեկտի ստացման համար կատարված ծախսումները): Այսպես, Ա. Կացը հանձնարարում է իրագործել ամենաառաջավոր, թեկուզ և անհամեմատ մեծ շահերի ծախսեր պահանջող այն բոլոր միջոցառումները, որոնք կապահովեն մեկ աշխատողին և արտադրական ֆոնդերի միավորին ընկնող առավելագույն արտադրանք (մարդ—ֆոնդա—արտադրանք)⁵: Մ. Բորը և Ն. Յակունինը գտնում են, որ արտադրության ընդհանուր արդյունավետությունն առավել ընդհանրական ձևով արտահայտվում է նյութական բարիքների արտադրության աճի ցուցանիշում (հաշվարկված մեկ մարդու հաշվով), առանց հաշվի առնելու կատարված ծախսումները⁶:

Տնտեսագիտական գրականության մեջ բավական լայն տարածում գտած մի այլ տեսակետի համաձայն արտադրության արդյունավետությունը և հասարակական աշխատանքի արտադրողականությունը նույնացվում են⁷: Սա նույնպես հանգեցնում է հասարակական արտադրության արդյունավետության օբյեկտիվ բնույթի և նրա՝ որպես ինքնուրույն քաղաքատնտեսական կատեգորիայի, գոյության մերժմանը: Հասարակական աշխատանքի արտադրողականությունը հասարակական արտադրության արդյունավետության մասնավոր դեպք է: Իրականում, ինչպես նշվեց, հասարակական արտադրության արդյունավետությունն ընդգրկում է վերարտադրության բոլոր փուլերը և հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այդ իսկ պատճառով այն դրսևորում է ամբողջությամբ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման որակական բնութագիրը: Դրա յուրահատկությունն այն է, որ արտահայտում է որոշակի հարաբերություններ և ցույց տալիս, թե հասարակական ինչպիսի ծախսումներով է ձեռք բերվել այս կամ այն վերջնական արդյունքը:

Սոցիալիզմի արտադրահարաբերությունների որակական նոր բնույթը և հասարակական արտադրության նպատակը կանխորոշում են նաև հասարա-

⁴ А. А. М х и т а р я н, Управление конечными результатами технического развития производства, Ереван, 1982, с. 45.

⁵ А. И. К а ц, Динамический экономический оптимум (общий критерий), М., 1970.

⁶ «Плановое хозяйство», 1977, № 1, с. 106.

⁷ Л. А. Л е о н т е в, Экономические проблемы развитого социализма, М., 1972, с. 156; В. О. Ч е р н я в с к и й, Эффективная экономика, М., 1967, с. 63; П. Я. О к т я б р ь с к и й, Сущность и критерий экономической эффективности общественного производства, Л., 1973, с. 24—25 и т. д.

կական արտադրության արդյունավետության յուրահատուկ բնութագիրը, դրա իրացման ու օգտագործման նոր եղանակ ու ասպարեզ: Հետևապես, սոցիալ-տնտեսական արտադրության արդյունավետության ընդհանուր, գերագույն չափանիշը նստաբնակությունը զարգացման կոնկրետ փուլում առաջադրվող սոցիալ-տնտեսական խնդիրների շուտափույթ իրականացումն է, այսինքն առդյունավետ է այն, ինչ առավելագույն չափով է նպաստում և ապահովում ժողովրդի բարեկեցության անընդ շարունակ, հասարակական արտադրության աճի բարձր տեմպեր, դրանք իրականացնելով միջոցների հնարավոր նվազագույն ծախսումներով: Չափանիշի որակական այս բնութագրումը դրա գործնական կիրառության տեսակետից պահանջում է քանակական գնահատման որոշակիություն: Դրա հետ մեկտեղ, վերարտադրության առանձին փուլերում և ժողովրդագրատնտեսական հիերարխիկ տարբեր մակարդակներում առանձնացվող չափանիշները, որոնք կոչված են ապահովելու այդ ընդհանուր, գերագույն չափանիշով որոշվող խնդիրների իրականացումն առավել արդյունավետ ուղիներով ու միջոցներով, էությունամբ և ցուցանիշների համապատասխան համակարգով չպետք է հակադրվեն հասարակական արտադրության արդյունավետության ընդհանուր չափանիշին:

Ինչպես արդյունավետության կատեգորիան, այնպես էլ արդյունավետության չափանիշն օբյեկտիվորեն գոյություն ունեցող կատեգորիա է: Եթե տնտեսական արդյունավետության կատեգորիան, ինչպես երևում է վերը շարադրվածից, արտահայտում, դրսևորում է մարդկանց հասարակական-արտադրական հարաբերության կողմերից մեկը, ապա արդյունավետության չափանիշն այն դարձնում է առավել կոնկրետ, որոշակի (թե այդ հարաբերության որ կողմի դրսևորումն է այն արտացոլում), պայմանավորում դրա քանակական հնարավոր գնահատումը: Հասարակական արտադրության արդյունավետության էությունից և բովանդակությունից ելնելով անհրաժեշտ է ընտրել այնպիսի չափանիշ (ինչպես նաև դրան համապատասխանող ցուցանիշների ու որոշիչների համակարգ), որն ընդհանրական լինելով հասարակական արտադրության արդյունավետության համար, կոնկրետ խնդիրների (արտադրողական ուժերի տեղաբաշխման, արտադրության տեղաբաշխման և կապիտալ շինարարության տարբերակներից լավագույնի ընտրության, ձեռնարկությունների, միավորումների, ճյուղերի արտադրատնտեսական գործունեության գնահատման, նոր տեխնիկայի ներդրման և այլն) հետազոտման կամ լուծման ժամանակ չհակադրվի ընտրվող չափանիշին (ինչպես նաև դրան համապատասխանող ցուցանիշներին ու որոշիչներին):

Հասարակական արտադրության արդյունավետության և ժողովրդական տնտեսության որևէ ոլորտում կոնկրետ արտադրության արդյունավետության չափանիշի և ցուցանիշների միասնությունն ապահովելու համար անմիջական արտադրության պրոցեսի վերջնական արդյունքներն ու ծախսումները նույնպես անհրաժեշտ է դիտարկել ու գնահատել հասարակական արտադրության շրջանակներում: Այսինքն, հասարակական արտադրության տեսանկյունից յուրաքանչյուր կոնկրետ, անմիջական արտադրություն պետք է դիտարկել որպես աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով առանձնացված, սակայն միասնական ամբողջական մեկ համակարգում գտնվող փոխապայմանավորված և փոխկապակցված օղակներից մեկի, որոնց միջև առկա ապրանքադրամային հարաբերությունների սահմաններում իրականացվում է սպառողական արժեքների տեսքով հանդես եկող աշխատանքի առանձին տեսակների արդյունքի որոշակի քանակների փոխանակություն: Մեթոդաբանական այսպիսի մոտեցումից բխում է, որ որևէ ոլորտում անմիջական արտադրության արժեքային կապ չունեցող տեսքով հանդես եկող վերջնական արդյունքը հետևանք է ինչպես հենց այդ ոլորտում ծախսված անմիջական, կոնկրետ, կենդանի աշխատանքի, այնպես էլ մինչև այդ այլ ոլորտներում կատարված աշխատանքի այն բոլոր ծախսումների,

առանց որոնց կոնկրետ այդ ոլորտում հնարավոր չէր արտադրական պրոցեսի տվյալ մակարդակով կազմակերպումը: Արտադրության կազմակերպման հիերարխիկ տարրեր մակարդակներում (ընդհուպ ամբողջական հասարակական արտադրություն) և տարածական տարբեր ոլորտներում նոր ստեղծված վերջնական արդյունքի չափի, մեծության որոշման ժամանակ համանման մոտեցումից հետևում է, որ արդյունավետության հաշվարկներում վերջնական արդյունքի մեծությունն այն պայմանավորող «ծախսերի» հետ չափակցելիս վերջիններում («ծախսերում») նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել հասարակական այն ամբողջ աշխատանքը, առանց որի հնարավոր չէր վերջնական արդյունքի ստեղծում տվյալ ոլորտում: Այսինքն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջնական արդյունք ապահովող «ծախսերն» առավել լայն ընդգրկում ունեն, քան անմիջական արտադրության պրոցեսում սպառողական արժեքների արտադրության և արդյունաբերության մեջ հաշվառման ու վիճակագրության գործող հրահանգներին համապատասխան արտադրանքի ինքնարժեքում արտացոլված ընթացիկ ծախսերն են: Զէ՞ որ սպառողական արժեքների արտադրության ընթացքում ռեսուրսների մի զգալի մասն այդ պրոցեսին մասնակցում է ամբողջապես, սակայն նոր ստեղծվող արդյունքի վրա կատարված «ծախսերի» մեջ (մասնավորապես, ինքնարժեքում) մտցվում է դրանց արժեքի մի մասը (աշխատանքի միջոցների մշտական մշակման չափով), այս կամ այն համամասնությամբ, ելնելով այդ ռեսուրսների ամբողջական արժեքից և արտադրության բազմաթիվ ցիկլների, փուլերի մասնակցության թվաքանակից, յուրաքանչյուր ցիկլի տեղությունից կամ մեկ այլ պարամետրից (հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման, ամորտիզացիայի, նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման հատկացումների, երկրաբանահետախուզական աշխատանքների մասհանումների և այլ տեսքով):

Ի՞նչ խոսք, եթե նոր ստեղծված արդյունքի մեծությունը որոշելիս այդ ռեսուրսներին արժեքի մաս-մաս հաշվառման նման կարգն ընդունելի է, ապա նույնը չի կարելի ասել այդ արդյունքի ստեղծումը պայմանավորող «ծախսերի» մեծության որոշման մասին: Զէ՞ որ հասարակությունը շատ հաճախ արտադրական ռեսուրսի տեսքով (հիմնական ֆոնդերի, օգտակար հանածոյի հայտնաբերված ու հետախուզված հանքավայրի, գիտատեխնիկական ամբողջական ռեսուրսի և այլն) արտադրության կազմակերպման, նոր արդյունքի ստեղծման համար արտադրական ոլորտում երկար ժամանակով մասամբ «օտարում», «սառեցնում է» հասարակական որոշակի աշխատանք, որը միայն ամբողջապես կարող է մասնակցել արտադրության պրոցեսին և ապահովել դրա անընդհատության նորմալ ընթացքը: Հետևապես, արտադրության կոնկրետ փուլում արդյունավետությունը որոշելիս ստեղծված վերջնական արդյունքն այն ապահովող «ծախսերի» հետ չափակցելիս անհրաժեշտ է վերջիններում հաշվի առնել ոչ միայն ընթացիկ, արտադրության տվյալ փուլում ու ցիկլում կատարված ծախսերը, որոնցով այսօր ձևավորվում է ինքնարժեքը, այլև նախկինում ծախսված հասարակական այն աշխատանքը, որը հանդես է գալիս արտադրական այս կամ այն ռեսուրսի տեսքով և մասնակցում է արտադրության պրոցեսին ամբողջապես, արտադրության մեկից ավելի ցիկլներում: Այսինքն, անհրաժեշտ է ամբողջապես կիրառվող ռեսուրսը (որը միայն իր ամբողջական տեսքով կարող է ապահովել արտադրության շարունակական պրոցեսի նորմալ ընթացքը) տարբերել անմիջականորեն օգտագործված, ծախսված ռեսուրսից: Վերջինը՝ օգտագործված, ծախսված ռեսուրսը, իր արժեքը տվյալ ոլորտում նոր ստեղծված արդյունքին է փոխանցում ամբողջությամբ (եթե այն մասնակցում է արտադրության մեկ ցիկլին) կամ կիրառվող ռեսուրսի արժեքի մարման, մաշվածքի մասի չափով (մարման մասհանումների, արդյունահանվող հանքանյութի մարված պաշարների արժեքի չափով և այլն), եթե մասնակցում է արտադրության մեկից ավելի ցիկլներին: Դիտարկելով արժեքի և սպառողական արժեքի ձևավորման ժամանակ արտադրության միջոցների դերը, Կ. Մարքսը գրում է. «Անհրաժեշտ արժեքներում կա մեքենայի՝ որպես արժեքի գոյացման

տարրի, և մեքենայի՝ որպէս արդյունքի գոյացման տարրի միջև... Աշխատանքի ամեն միջոց... աշխատանքի պրոցեսին միշտ ամբողջովին է մասնակցում, իսկ արժեքի գոյացման պրոցեսին՝ միշտ մասերով, իր օրական միշին մաշվածքի հետ համամասնորեն⁸:

Համամասն մոտեցման դեպքում հարց է ծագում, թե արտադրության արդյունավետության տնտեսական գնահատման չափանիշի և ցուցանիշի ընտրության ու հիմնավորման ժամանակ հասարակական աշխատանքի նախնական այդ «ծախսերի» արդյունք հանդիսացող և արտադրական ռեսուրսի տեսքով ամբողջապէս կիրառվող ո՞ր ռեսուրսները, ի՞նչ կերպ և ի՞նչ չափով պետք է հաշվի առնել:

Հասարակական աշխատանքի արդյունք հանդիսացող արտադրական ռեսուրսները դրանց կոնկրետ հասարակական ձևի դրսևորման տեսանկյունից հանդես են գալիս արտադրական ֆոնդերի ռոշակի ճաստակարան աշխատանքով ճայտնաբերված և արտադրական ռաբա ընդգրկված բնական ռեսուրսի (հողային, ընդերքի, անտառային, կենդանաբանական՝ մասնավորապէս՝ ձկնային պաշարների և այլն), գիտատեխնիկական և աշխատանքային ռեսուրսի և այլ տեսքով: Հասարակության կողմից արտադրության կազմակերպման նպատակով առանձնացվող, ավանսավորվող այդ ռեսուրսները կլինեն կիրառվող ռեսուրսներ, որոնք ամբողջապէս մասնակցում են արտադրության պրոցեսին: Արտադրության պրոցեսում կիրառվող ռեսուրսներից մի քանիսն արդյունավետության հաշվարկներում առանձին հեղինակների հանձնարարականներում մասամբ հաշվի են առնվում:

Արդյունավետության կոնկրետ հաշվարկներում, կախված այն բանից, թե արտադրության վերջնական արդյունքը չափակցվում է արտադրության ընթացքում ծախսերի, թե՞ օգտագործված ռեսուրսների հետ, կունենանք ինչպես բովանդակությամբ, այնպէս էլ մեծությամբ տարբեր ցուցանիշներ: Պայմանավորված դրանով՝ գրականության մեջ հանդիպող և գործնականում կիրառվող արդյունավետության ցուցանիշները կարելի է դասակարգել երկու խմբում: արդյունավետության ցուցանիշների ծախսումնային խումբ և արդյունավետության ռեսուրսային ցուցանիշների խումբ: Առաջին՝ ծախսումնային, խմբի մեջ դասակարգված արդյունավետության ցուցանիշները կորոշվեն

$$\xi = \frac{\text{արդյունք}}{\text{ծախսում}} \quad \text{կամ} \quad \xi' = \frac{\text{ծախսում}}{\text{արդյունք}} \text{ հարաբերությամբ,}$$
 իսկ երկրորդ խմբում դասակարգվածները՝

$$\xi_1 = \frac{\text{արդյունք}}{\text{ռեսուրս}} \quad \text{կամ} \quad \xi'_1 = \frac{\text{ռեսուրս}}{\text{արդյունք}} \text{ հարաբերությամբ:}$$

Համամասն ելակետային մոտեցման դեպքում արդյունաբերական արտադրության արդյունավետության ցուցանիշներն այդ երկու խմբերի միջև կարելի է դասակարգել հետևյալ կերպ (արտադրանքի ծավալը, ծախսումներն ու ռեսուրսները կարող են արտահայտված լինել ինչպէս բնեղեն, այնպէս էլ արժեքային ձևով, կախված արտադրության բնույթից, ցուցանիշի օգտագործման նպատակից և այլն):

⁸ Կ. Մ ր ք ս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 407:

**Արդյունաբերական արտադրության արդյունավետության հիմնական ցուցանիշներ
խմբերի դասակարգումը⁹**

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի որոշման ձևը
1	2
1. Մախտումների օգտագործման արդյունավետության ցուցանիշներ	
ա) աշխատանքի լրիվ ծախսումների արդյունավետությունը (աշխատանքի լրիվ ծախսումների արտադրողականություն)	Արտադրանքի ծավալի հարաբերությունն է դրա արտադրության պրոցեսում ծախսված կենդանի և առարկայացած (նյութականացած) աշխատանքի ծախսերի ընդհանուր գումարին:
արտադրանքի միավորի լրիվ աշխատատարություն	կենդանի և առարկայացած (նյութականացած) աշխատանքի գումարային, ընդհանուր ծախսերի հարաբերությունն է դրա արդյունքում ստեղծված արտադրանքի ծավալի վրա (մասնավոր դեպքերում այն ջուլը կտա արտադրանքի միավորի ինքնարժեքը, 1 ռուբ. արտադրանքին ընկնող ծախսերը և այլն):
բ) կենդանի աշխատանքի ծախսումների արդյունավետություն (կենդանի աշխատանքի արտադրողականություն)	Արտադրանքի ծավալի հարաբերությունն է դրա արտադրության պրոցեսում ծախսված կենդանի աշխատանքի ծախսումների քանակին:
արտադրանքի միավորի աշխատատարություն (ոչ լրիվ, միայն կենդանի աշխատանքի)	կենդանի աշխատանքի ծախսումների հարաբերությունն է թողարկված արտադրանքի ծավալին:
դ) նյութական ծախսումների միավորի հատույց	Արտադրանքի ծավալի հարաբերությունն է ծախսված նյութերի (հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, վառելիքի, էներգիայի և այլն) ծավալին:
արտադրանքի միավորի նյութատարություն	նյութական ծախսումների հարաբերությունն է արտադրանքի ծավալին:
դ) շահույթի միավորի ստացման վրա կատարված ծախսումներ (շահույթի միավորին ընկնող արտադրանքի ծավալը)	Արտադրանքի ինքնարժեքի (ծավալի) հարաբերությունն է շահույթի ընդհանուր գումարին:
արտադրանքի միավորի շահութարություն	Շահույթի հարաբերությունն է արտադրանքի ծավալին:
ե) բնահումքի միավորի հատույց	Թողարկված արտադրանքի հարաբերությունն է ծախսված բնահումքի ծավալին:
արտադրանքի բնահումքատարությունը	Մախսված բնահումքի ծավալի հարաբերությունն է արտադրանքի ծավալին:
2. Ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշներ	
ա) կենդանի աշխատանքի ռեսուրսների Արտադրանքի ծավալի հարաբերությունն է արտադրության օգտագործման արդյունավետություն	Արտադրանքի ծավալի հարաբերությունն է արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ կենդանի աշխատանքի ռեսուրսների ընդհանուր մեծությանը:
(կոնկրետ արտադրության պայմաններում)	կենդանի աշխատանքի ռեսուրսների ընդհանուր մեծության հարաբերությունն է արտադրանքի ծավալին:
կենդանի աշխատանքի ռեսուրսների միավորի հատույց	Արտադրանքի ծավալի (կամ արդյունքի, շահույթի) հարաբերությունն է արտադրական ֆոնդերի (ինչպես միատեղ հիմնական ու նորմավորվող շրջանառու միջոցների համար, այնպես էլ դրանց առանձին-առանձին) մեծությանը (շահույթի դեպքում կլինի շահութաբերության ցուցանիշն ըստ արտադրական ֆոնդերի):

⁹ Այստեղ բերված ցուցանիշներով չեն սահմանափակվում արդյունաբերական արտադրության արդյունավետության՝ գրականության մեջ հանդիպող, գործնականում կիրառվող բոլոր ցուցանիշները: Այստեղ դրանք բերված են ընդհանրացված խմբերով, արտադրության պրոցեսի տարրերին համապատասխան:

1	2
արտադրանքի միավորի ֆոնդատու- թյուն	Արտադրական ֆոնդերի ծավալի հարաբերությունն է ար- տադրանքի ծավալին (կամ արդյունքի, շահույթի մեծու- թյանը):
ա) կապիտալ ներդրումների արդյունավե- տությունը (կապիտալահատույց)	Արտադրանքի ծավալի (էֆեկտի) հարաբերությունն է դրա թողարկման համար անհրաժեշտ կապիտալ ներդր- ումների ծավալին:
արտադրանքի միավորի կապիտալա- տարություն	Կապիտալ ներդրումների հարաբերությունն է դրանց մի- ջոցով թողարկված արտադրանքի ծավալին (էֆեկտի մե- ծությունը):
դ) բնական ռեսուրսների (դրանց առան- ձին տեսակների, խմբերի) օգտա- գործման հատույց (բնառեսուրսահա- տույց)	Արտադրանքի ծավալի հարաբերությունն է ներգրավված բնական ռեսուրսների (դրանց առանձին տեսակների կամ խմբերի) մեծությանը:
արտադրանքի բնառեսուրսատարու- թյուն	Արտադրության տվյալ ոլորտում (օբյեկտում) ընդ- գրկված բնական ռեսուրսների (դրանց առանձին տե- սակների կամ խմբերի) մեծության հարաբերությունն է թողարկված արտադրանքի ծավալին:

Ծախսումային և ռեսուրսային հիման վրա արդյունավետության ցուցանիշ-
ների հանձնարարվող դասակարգումը ցուցանիշների ընդհանրացված տեսքով
բերվող խմբերում, ինչպես նաև մասնակի ցուցանիշների հաշվարկման մեթո-
դական հարցերի մշակումը հնարավորություն կընձեռեն, հաշվի առնելով կոնկ-
րետ արտադրության առանձնատիպությունները, իրականացվող տնտեսագի-
տական հետազոտության նպատակը և խնդիրները, ընտրել ու ստեղծել ցուցա-
նիշների մի այնպիսի համակարգ, որը թույլ տա արտադրության ընդհանուր
արդյունավետությունը համակողմանի հետադոսել և գնահատել ինչպես դրա
էլեմենտների (տարրերի) ծախսումների, այնպես էլ կիրառվող ռեսուրսների
արդյունավետության տեսանկյունից: Այսպիսի պայմաններում, երբ միաժա-
մանակ բացահայտվի այդ համակարգում միևնույն խմբի ներսում ընդգրկված
առանձին ցուցանիշների, ինչպես նաև արտադրության միասն (բնական, աշ-
խատանքային և այլն) ծախսումային և ռեսուրսային ցուցանիշների միջև փոխ-
կախվածությունը, հնարավոր կլինի առավելագույն չափով ապահովել արտադ-
րության տնտեսավարկային և ժողովրդատնտեսական արդյունավետության մե-
թոդաբանական ընդհանրությունը, արտադրության արդյունավետության բարձ-
րացման իրական ռեզերվների բացահայտումը: Իսկ արտադրության մեջ ներ-
գրված արտադրական ռեսուրսների տեսակների և արտադրության յուրա-
քանչյուր ցիկլում դրանց ծախսումների մեծության միջև կապերի բացահայ-
տումը և արդյունավետության հաշվարկներում դրանց հաշվառումը մեծամա-
սամբ գործնականորեն իրականացվի է: Որպես օրինակ դիտարկենք հանքար-
դյունաբերության ճյուղերում բնահումքի օգտագործման ծախսումային և ռե-
սուրսային ցուցանիշների միջև հնարավոր կապերի բացահայտումը:

Հայտնի է, որ հանքարդյունաբերության որևէ արտադրության, օրինակ,
հանքանյութի արդյունահանման կազմակերպումը ենթադրում է օգտակար հա-
նածուխի հանքավայրի հայտնաբերում, հետախուզում, պաշարների հաշվառ-
վում, այսինքն՝ համապատասխան բնահումքի ռեսուրսային պոտենցիալի
ստեղծում: Դա այն հիմնական ելակետն է, որ պայմանավորում է համապա-
տասխան արտադրական հզորության մեծությունն ու ստեղծումը և հանքար-
դյունաբերական արտադրության կազմակերպումը. Հաշվարկված բնահումքի
պաշարներն ամբողջությամբ հանդես են գալիս բնահումքի ռեսուրսների տես-
քով, իսկ դրա արդյունահանվող ամենամյա քանակը (մեկ տարվա ընթացքում
արդյունահանված օգտակար հանածուխի քանակն արժեքային կամ բնեղեն ար-

տահայտությամբ)՝ այդ ռեսուրսի ծախսումների տեսքով (հանքարդյունահանող ձեռնարկության կողմից տարեկան թողարկվող արտադրանքի համար)։

Բնահումքի ռեսուրսն ամբողջությամբ, որպես լեռնային արտադրության արտադրական հիմնական տարր, հանդես է գալիս իբրև արտադրության շարունակականության և անընդհատության ապահովման անհրաժեշտ պայման, սակայն արտադրության յուրաքանչյուր «ցիկլում» և ժամանակի ընթացքում (մեկ տարվա ընթացքում) այն ինչպես արժեքային, այնպես էլ բնեղեն տեսքով կրում է քանակական որոշակի փոփոխություն, նվազելով իր սկզբնական մեծությունից (թողարկվող արտադրանքին անցնելու չափով)։ Հետևապես, յուրաքանչյուր հաջորդ արտադրական ցիկլում բնահումքի ռեսուրսը մասնակցում է ոչ թե իր սկզբնական, այլ մնացորդային մեծության չափով (մինչ այդ արդյունահանված ռեսուրսի չափով պակաս)։ Հանքարդյունաբերության մեջ բնահումքի միավորի հատույցը (ՀԲՀ) և բնական ռեսուրսի միավորի հատույցը (ՀԲՈ) կորոշվի հետևյալ կերպ.

$$\text{ՀԲՀ} = \frac{\text{Ա}}{\text{ԲՀԾ}} \quad \text{ՀԲՈ} = \frac{\text{Ա}}{\text{ԲՀՆ}}, \text{ որտեղ}$$

Ա—հանքարդյունահանող ձեռնարկությունում (ճյուղում) թողարկված արտադրանքն է (բնեղեն կամ արժեքային արտահայտությամբ),

ԲՀԾ—մեկ տարվա ընթացքում կամ մեկ արտադրական «ցիկլում» Ա ծավալի արտադրանքի թողարկման համար ծախսված բնահումքն է (բնեղեն կամ արժեքային արտահայտությամբ),

ԲՀՆ—այդ նույն Ա ծավալի արտադրանքի թողարկման նպատակով արտադրական ոլորտ ներգրավված բնական ռեսուրսի ամբողջական քանակն է (բնեղեն կամ արժեքային արտահայտությամբ)։

Արտադրական ոլորտ ներգրավված և կիրառվող բնական ռեսուրսի (ԲՀՆ) օգտագործման ամորտիզացիոն ժամանակամիջոցը (այսինքն ընդերքից այդ ռեսուրսի արդյունահանման տարիների քանակը) նշանակելով $\Phi_{\text{ԲՀՆ}}$, դժվար է նկատել վերջինի ($\Phi_{\text{ԲՀՆ}}$) և տարեկան արդյունահանված, ծախսված բնահումքի (ԲՀԾ) միջին քանակի ու ընդերքում բնական ռեսուրսի ամբողջական ծավալի (ԲՀՆ) միջև գոյություն ունեցող կապը.

$$\Phi_{\text{ԲՀՆ}} = \text{ԲՀՆ} : \text{ԲՀԾ}$$

Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ արտադրական ոլորտ ընդգրկված ամբողջական ռեսուրսը, եթե առաջին տարում ինչպես բնեղեն, այնպես էլ արժեքային տեսանկյունով ամբողջությամբ (ԲՀՆ) է մասնակցում արտադրական պրոցեսին և այդ ցուցանիշով բնական ռեսուրսի միավորի հատույցն հաշվարկվելու է վերը նշված՝

$$\text{ՀԲՀ} = \frac{\text{Ա}}{\text{ԲՀԾ}} \text{ եղանակով,}$$

ապա երկրորդ տարում այդ ամբողջական ռեսուրսի միավորի հաշվարկը իրականացնելիս հայտարարը (ՀԲՀ) փոքր կլինի $\frac{\text{ԲՀՆ}}{\Phi_{\text{ԲՀՆ}}}$ -ի չափով, երրորդ տարում $\frac{2\text{ԲՀՆ}}{\Phi_{\text{ԲՀՆ}}}$ -ի չափով և այլն։ Եթե առաջին տարում բնական ռեսուրսի մեծությունը

նշանակենք ԲՀՆ_1 -ով, ապա երկրորդ տարում այն (ԲՀՆ_2) հավասար կլինի

$$\text{ԲՀՆ}_2 = \text{ԲՀՆ}_1 \cdot \left(1 - \frac{1}{\Phi_{\text{ԲՀՆ}}}\right),$$

երրորդ տարում՝

$$R_{n+3} = R_{n+2} \cdot \left(1 - \frac{2}{\phi_{R_{n+2}}}\right), \text{ i-րդ տարում՝}$$

$$R_{n+1} = R_{n+2} \cdot \left(1 - \frac{1-1}{\phi_{R_{n+2}}}\right),$$

Այս դեպքում, i-րդ տարում բնական ռեսուրսի հատույցի մեծությունը (Z_{Rn}) հավասար կլինի.

$$Z_{Rn+1} = \frac{U_i}{R_{n+1}} = \frac{U_i \cdot \phi_{R_{n+2}}}{R_{n+2}} \cdot \frac{1}{(\phi_{R_{n+2}} + 1 - 1)} = \frac{U_i \cdot \phi_{R_{n+2}} \cdot \phi}{R_{n+2}}$$

այսինքն, i-րդ տարում բնական ամբողջական ռեսուրսի հատույցը հավասար է թողարկված արտադրանքի ամբողջ քանակի և ի սկզբանե (նախնական) արտադրական ոլորտ ներգրավված արտադրական ռեսուրսի հարաբերության ու ժամանակի գործոնը հաշվի առնող գործակցի

$$(\phi = \frac{1}{\phi_{R_{n+2}} + 1 - 1}) \text{ արտադրյալին:}$$

Այդ դեպքում, i-րդ տարում ծախսված բնահումքի միավորի հատույցը (Z_{Ri})

$$\text{հավասար կլինի՝ } Z_{Ri} = \frac{U_i}{R_{i+1}} = \frac{R_{n+2}}{R_{i+1}} \cdot \frac{U_i}{R_{n+2}} = \frac{\phi_{R_{n+2}} \cdot U_i}{R_{n+2}} = \frac{Z_{Rn}}{\phi} = Z_{Rn} \cdot$$

$$(\phi_{R_{n+2}} + 1 - 1) \quad Z_{Ri+1} = Z_{Rn} \cdot (\phi_{R_{n+2}} + 1 - 1);$$

Այսինքն, հնարավորություն է ընձեռնում ժամանակի գործոնը հաշվի առնող գործակցի օգնությամբ բացահայտել, սահմանել ու քանակապես գնահատել բնահումքի ռեսուրսի հատույցի և ծախսված բնահումքի հատույցի միջև գոյություն ունեցող կապը: Իսկ այդպիսի կապերի բացահայտումն ու օգտագործումը կարևոր նշանակություն ունի արտադրության արդյունավետության կառավարման մեխանիզմում, արդյունավետության նորմատիվային բազայի ձևավորման ու հիմնավորման, արտադրության չափերի օպտիմալացման, երկրորդական հետախուզական աշխատանքների պլանավորման կատարելագործման և այլ խնդիրների լուծման գործում: Այն, նախ և առաջ, հնարավորություն կընձեռնի, ելնելով ծախսված բնահումքի հատույցի նորմատիվային մեծությունից (որն իր մեծությամբ համապատասխանելու է տվյալ պահին արդյունաբերական արտադրության փաստացի կամ նորմատիվային արդյունավետությանը), որոշել բնահումքի ռեսուրսի հատույցի նորմատիվային մեծությունը և տվյալ օբյեկտում (հանքավայրում) բնահումքի (օգտակար հանածոյի) ապահովագրական պաշարների չափը:

Կուսակցության և կառավարության ընդունած որոշումներում բազմիցս ընդգծվել է, որ հանքարդյունաբերության ձեռնարկությունները պետք է ապահովել հումքային հուսալի բազայով: Սակայն ինչպես առօրյալում, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ չկան հուսալիության չափի վերաբերյալ մշակված նորմատիվներ կամ կոնկրետ հանձնարարականներ: Ճշտված չէ, թե տվյալ բնահումքը արդյունահանող օբյեկտը դրա ինչ քանակի պաշարներով պետք է ապահովված լինի, որպեսզի համարվի «հուսալի»: Տնտեսավարման արդի պայմաններում, երբ շահագործման համար արդյունահանող ձեռնարկությունը հանձնված բնահումքի ռեսուրսների ամբողջական մեծությունը (պաշարները) անմիջականորեն չի ազդում հանքարդյունահանող ձեռնարկության տեխնիկատնտեսական ընթացիկ ցուցանիշների վրա, ձեռնարկության տեսանկյունից ձեռնառու է դառնում «որքան մեծ չափի ռեսուրս (պաշար), այնքան լավ»

սկզբունքը, քանի որ բարենպաստ պայման է ստեղծվում բնահումքի ընտրանքային արդյունահանման համար, թուլանում է պայքարը ռեսուրսի խնայողական օգտագործման ոլորտում և այլն: Որպես հետևանք, առօրյայում համանման մոտեցման պայմաններում, բնահումքի մի շարք տեսակների համար հանքարդյունահանող ձեռնարկություններին շահագործման հանձնված հանքավայրերում մանրամասն հետախուզված և հաստատված պաշարների քանակը դրանց ապահովագրական պաշարները գերազանցում է մի քանի անգամից մինչև տասնյակ անգամներ, իսկ առանձին դեպքերում դրանք չեն բավականացնում անգամ ստեղծված ձեռնարկության ամորտիզացիոն (նվազագույն) ժամկետում արդյունահանում կազմակերպելու համար: Բնահումքի «ապահովագրական» պաշարների հանձնարարվող եղանակով հաշվարկումը հնարավորություն կընձեռնի որոշել դրանց անհրաժեշտ չափը և երկրաբանահետախուզական աշխատանքները պլանավորելիս խուսափել ինչպես բնահումքի առանձին տեսակների «գերհետախուզումից», այնպես էլ «թերհետախուզումից»:

Արդյունաբերական արտադրության կառավարման ու պլանավորման պրակտիկայում արտադրության արդյունավետության հիմնավոր չափանիշի և ցուցանիշների համակարգի կիրառումը կնպաստի նրա առանձին ստորաբաժանումներում և հիերարխիկ տարբեր մակարդակներում պլաններ մշակելիս հայտնաբերել արդյունավետության բարձրացման նոր ռեզերվներ, գիտության ու տեխնիկայի նվաճումների լայնորեն կիրառման ուղիով ապահովել արտադրության ինտենսիվացման պրոցեսի արագացում:

КРИТЕРИИ И ПОКАЗАТЕЛИ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ ПРОМЫШЛЕННОГО ПРОИЗВОДСТВА

БЮЗАНД СЕЛВИНАЗЯН

Резюме

Реализация выработанной XXVII съездом КПСС широкой программы интенсификации народного хозяйства выдвигает комплекс новых требований к вопросам планомерного управления процессом всемерного повышения эффективности производства. В этой связи особую значимость приобретает всестороннее раскрытие сущности эффективности и форм ее проявления, выработка обоснованных рекомендаций по выбору критерия и показателей, совершенствованию методов и способов исчисления эффективности и т. д.

В зависимости от того, какой выбран критерий и с какими затратами (примененными целиком ресурсами или затраченной в одном производственном цикле их частью) сопоставляется конечный результат производственного процесса, показатели эффективности будут различными как по характеру и содержанию, так и по величине. Исходя из этих признаков, показатели эффективности следует классифицировать по двум группам: показатели эффективности целиком примененных производственных ресурсов и показатели эффективности ресурсов, затраченных в одном производственном цикле. Исходным моментом предлагаемой классификации является причинно-следственная связь между конечными результатами производства (выступающими в виде эффекта) и обуславливающими их создание общественными затратами.

Установление количественных зависимостей между однородными показателями этих двух групп позволит объективно и комплексно оценить эффективность производства и принять наиболее обоснованные управленческие решения по ее повышению.